

## ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ



Պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու նպատակով պայմանագրի կողմերը միմյանց նկատմամբ հաճախ սահմանում են դրանք չկատարելու որոշակի պատասխանատվության միջոցներ, որոնց առկայությունը միտված է կողմերին ստիպելու ձեռնարկել իրենց պարտավորությունների կատարմանն ուղղված պատշաճ գործողություններ:

Որպես պարտավորությունների կատարման ապահովման երաշխիք, ի թիվս ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովման այլ միջոցների, առանձնահատուկ տարածում ունի տուժանքի (տուգանք, տույժ) կիրառումը:

### Ի՞նչ է տուժանքը

Տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել: *(ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մաս):*

Վերոգրյալից հետևում է, որ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պարտատերը կարող է պարտապանին ներկայացնել տույժ վճարելու պահանջ: Այսինքն՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու փաստը բավարար պայման է պարտապանին տույժ վճարելու պահանջ ներկայացնելու համար: Ավելին՝ նման պահանջով հանդես գալու դեպքում պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ

պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով իրեն հասցվել է վնաս:

Անդրադառնալով տուժանք, տույժ և տուգանք հասկացություններին՝ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ օրենսդրությամբ դրանց միջև որևէ հստակ տարանջատում սահմանված չէ, իսկ հիմնական տարբերությունը կայանում է դրանց գործնական կիրառության մեջ, մասնավորապես՝

1. **Տուժանքը և տուգանքը** կիրառվում են պարտավորության չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում՝ որոշակի տոկոսադրույքի կամ ֆիքսված գումարի չափով փոխհատուցում ստանալու ձևով: Օրինակ՝ ապրանքը չմատակարարելու դեպքում ապրանքի գնի 10%-ի չափով հատուցում ստանալու կամ գույքը չհանձնելու դեպքում 200,000 ՀՀ դրամ գումար չափով հատուցում ստանալու ձևով:

2. **Տույժը** կիրառվում է որոշակի ժամկետի վրա հասնելուց հետո պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում յուրաքանչյուր կետանցված օրվա համար որոշակի տոկոսադրույք հաշվարկելու ձևով: Օրինակ՝ վարկային պայմանագրով հերթական մարումը չկատարելու դեպքում յուրաքանչյուր կետանցված օրվա համար օրական 0,13%-ի չափով տույժ հաշվարկելու միջոցով:

### **Տուժանքի առավելագույն չափը**

Տուժանքի առավելագույն չափը սահմանվել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 17/12/2017 թվականին ընդունված ՀՕ-319-Ն օրենքով: Մասնավորապես պայմանագրի կողմերի համար սահմանվեց կնքվող պայմանագրերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով սահմանված տուժանքի առավելագույն սահմանաչափերը նախատեսելու պահանջ: Այսպես՝ **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

**Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը խախտող համաձայնությունն առ ոչինչ է:

Սույն հոդվածով սահմանված տուժանքի առավելագույն չափը պարզելու համար անհրաժեշտ է պարզաբանել «ՀՀ կենտրոնական բանկի տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկ» և «տուժանքի տարեկան առավելագույն չափ» հասկացությունները: Այսպիսով՝

1. ՀՀ կենտրոնական բանկի տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը հաշվարկելու համար անհրաժեշտ է պարզել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափը, որը կազմում է 12%, ուստի քառապատիկը կազմում է 48% (12\*4=48):
2. Տուժանքի տարեկան առավելագույն չափը բացահայտելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ կենտրոնական բանկի տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, այն է՝ 48-ը,

բաժանել տարվա օրերի (365/366) ընդհանուր քանակի վրա, որի արդյունքում ստացվում է, որ տուժանքի օրական չափը չի կարող գերազանցել գերազանցել 0,13%-ի սահմանաչափը:

$$12*4=48/365=0,13\%$$

Ինչ վերաբերում է օրենսդրի այն պահանջին, որ պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը, ապա հարկ է արձանագրել, որ թե տուժանքի, թե տուգանքի և թե տույժի կիրառման (այդ թվում միաժամանակյա կիրառման դեպքում) դեպքում հարկավոր է վերոնշյալ բանաձևը կիրառելիս հաշվի առնել պարտապանի պարտավորության չափը և ձեռնպահ մնալ պարտավորության հիմնական գումարի առավելագույն սահմանաչափը գերազանցելուց, քանի որ թույլատրելի առավելագույն սահմանաչափի խախտումը հանգեցնելու է տուժանքի վերաբերյալ համաձայնության առոչնչության, ինչն էլ հիմք է հանդիսանալու պարտապանի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1093-րդ հոդվածով սահմանված անհիմն հարստացման դրույթների կիրառմամբ դիմելու իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը՝ պարտատիրոջը վճարված տույժերը ետ վերադարձնելու պահանջով:

Վերոգրյալից հետևում է, որ որ տուժանքը հանդիսանում է պարտավորությունների կատարման ապահովման երաշխիք: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսում է գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն: